Ս. Աստուածածնի մատուռը, որ այժմ քաղաքից դուրս մի այգու մէջ է. Ս. Խաչի եկեղեցին, որի տեղը այսօր ԱԹ-ՄԷյդանի է կոչւում, այսինքն ձիերի վաճառանոց: Թավրիզից յետոյ ամբողջ Ատրպատական գաւառը լի էր Հայերով, հայ եկեղեցիներով, վանքերով. անուանի էին Սալմաստ, Մարաղա, Խոյ, Արդաբիլ, Որմի, Դուխարզան քաղաքները եւայլն: Սալմաստի եպիսկոպոսութիւնը կաթուղիկոսութեան հաւասար դիրք ունէր:

Արարատեան աշխարհում, ի բաց առեալ Նախիջեւանը, Շամախին եւ Երեւանը, անուանի էր Ջուղայ աւանը կամ գիւղաքաղաքը, կամ ըստ օտար պատմագրների՝ Ջուլֆայ, Ջուլֆաթ, Երասխ գետի հիւսիսակողմում, Գողթան գաւառում: Ջուղայի ծագումը շատ հին է. Մովսէս Խորենացի (Գիրք Ա.) իր պատմութեան մէջ յիշում է թէ Տիգրան Երուանդեան Հայոց թագաւորը 565 տարի Քրիստոսից առաջ, նա՝ որ յաղթեց Աժդահակին եւ ժամանակակից էր Կիւրոսին, գերի անելով Աժդահակի տիկնոջ Անուշին, կանանց, պատանիներին եւ 10.000 հոգի, բերաւ բնակեցրեց Գողթան գաւառում եղած դաստակերտների եւ աւանների մէջ, որոց թւում յիշում է եւ Ջուղայ — "աւան առ եզերբ գետոյն Երասխայ:„ (Խորեն. պատմ. Հայոց. Վենետ. 1827, էջ 123:)

Երկար ժամանակ Ջուղայի մասին պատմութեան մէջ ոչ մի ձայն չէ լսւում թէ նա որ եւ է դեր խաղացած լինի: Երեւի մինչեւ ԺԵ.